ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԻ ՀՐԱՉՅԱՅԻ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ. Հ. Պետրոսյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ. Ա. Մարդոյան**
	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Վ. Հովհաննիսյան**
Առաջատար կազմակերպություն՝	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հուլիսի 6-ին՝ ժամը 14^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Աբովյան 52^{ա}, Երևանի պետական համալսարանի 8-րդ մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունիսի 6-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար՝
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ **Ա. Փ. Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Գիտելիքահենք տնտեսության կայուն զարգացման համատեքստում աշխատանքի և կրթության շուկաների համաչափ զարգացման համար առավել քան երբևէ կարևորվում են մտավոր ներուժի բացահայտումը, արդյունավետ օգտագործումն ու գնահատումը, նորարարության ու ստեղծարարության խթանումը: Սակայն տնտեսության, գիտության ու կրթության ոլորտների անհամաչափ զարգացման ներկայիս պայմաններում մտավոր աշխատանքի խթանումը, այդ աշխատանքի արդյունքների միջոցով մտավոր սեփականության ստեղծումը, գիտելիքահենք տնտեսության զարգացումը պահանջում են գիտելիքի ստեղծման ու փոխանցման առավել արդյունավետ մեխանիզմներ և ոլորտում առկա խնդիրների լուծման նոր մոտեցումներ:

Այս մարտահրավերները գիտելիքահենք հասարակության զարգացման և բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխման գործընթացներում ներգրավված հիմնական դերակատարներին առաջադրում են հիմնարար փոփոխությունների կատարման պահանջ: Բուհերն այդ մարտահրավերների հաղթահարման հանձնառությունը կրող առանցքային դերակատարներից են, քանի որ նրանց ներկայիս գործառույթների ընդլայնված շրջանակն ընդգրկում է նաև ակադեմիական հանրությունից ժամանակակից գիտելիքահենք հասարակության փոխակերպմանն ուղղված գործընթացների խթանումը: Մարտահրավերները դրական միտումների վերածելու նկատառումով բուհերը պետք է մշակեն և ներդնեն այնպիսի ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք կխթանեն իրենց առանցքային շահակիցների մտավոր ստեղծագործական գործունեությունը, այդ գործունեության արդյունքների արդյունավետ օգտագործումն ու մտավոր սեփականության պահպանումը:

Գիտելիքահենք տնտեսության և հասարակության զարգացման վերոնշյալ համընդհանուր հիմնախնդիրներն օրակարգային են նաև Հայաստանի Հանրապետությունում գիտակրթական բարեփոխումներ իրականացնող առանցքային դերակատարների համար: Տնտեսության, գիտության ու կրթության ոլորտների անհամաչափ զարգացումը խոչընդոտում է ՀՀ գիտելիքահենք տնտեսության երկարաժամկետ զարգացումը: Մինչդեռ վերջինս ենթադրում է գիտական հիմնարար հետազոտությունների ոլորտի խթանում, որի հիմքում մտավոր կապիտալի ստեղծումն ու գնահատումն է, մտավոր

սեփականության պահպանումը և ոլորտային բարեփոխումների մասնակիցների, այդ թվում՝ բուհերի դերի բարձրացումը:

ՀՀ բուհերում դեռևս առկա են մտավոր ներուժի իրաչափ ու արդյունավետ կիրառումը սահմանափակող ազգային, մշակութային և ինստիտուցիոնալ մի շարք խնդիրներ, որոնք ոչ միշտ են հստակ արտացոլվում բուհերի գործունեության բարելավմանն ուղղված գործընթացներում: Այս խնդիրների արդյունավետ լուծումը ենթադրում է բուհերի ինստիտուցիոնալ կառավարման համակարգերի և մանկավարժագիտական մոտեցումների վերանայում և արդիականացում՝ միտված բուհերի մարդկային ռեսուրսների և ուսումնառողների ուսումնական, գիտակրթական, ուսումնադաստիարակչական ու հետազոտական գործունեության խթանմանը: Ուրեմն, բուհերի կողմից կազմակերպվող և իրականացվող կրթության միջոցով մտավոր սեփականության ոլորտին առնչվող առանցքային գիտելիքների ձևավորումը, փոխանցումն ու ներդրումը կարող են զգալիորեն խթանել ուսումնառողների, պրոֆեսորադասախոսական կազմի ու բուհի այլ առանցքային շահակիցների մտավոր ստեղծագործական գործունեությունը, բարձրագույն կրթության ոլորտի բարելավումը և գիտելիքահենք հասարակության զարգացումը:

Հետազոտության նպատակն է բացահայտել և հիմնավորել մտավոր սեփականության կրթության առանցքային դերը բարձրագույն կրթության բարեփոխման ու գիտելիքահենք տնտեսության զարգացման գործընթացներում:

Հետազոտության խնդիրները

1. Հանգամանորեն ուսումնասիրել մտավոր սեփականության ոլորտի առանձնահատկությունները և մտավոր սեփականության պահպանման ազգային ու միջազգային փորձը գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում:
2. Բացահայտել մտավոր սեփականության ու բարձրագույն կրթության ոլորտների փոխկապակցվածությունը և բուհերում մտավոր սեփականության պահպանման առկա հիմնախնդիրները:
3. Հիմնավորել ՀՀ բուհերում մտավոր սեփականության կրթության կազմակերպման անհրաժեշտությունը և ՀՀ բուհերի կարևոր դերը գիտելիքահենք հասարակության զարգացման խնդրում:
4. Ուսումնասիրել մտավոր սեփականության կրթության կազմակերպման ռազմավարական և մանկավարժագիտական մոտեցումները ՀՀ բուհերում:
5. Բացահայտել ակադեմիական ազնվության պահպանման արդի հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների համատեքստում:

6. Մշակել մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդել ՀՀ բուհերի համար և այդ մոդելի առանցքային բաղադրիչ հանդիսացող՝ մտավոր սեփականության պահպանմանն առնչվող առանցքային թեմաները բովանդակող ուսումնական դասընթաց:

Հետազոտության գիտական նորույթը

- Համակողմանի ուսումնասիրմամբ բացահայտվել են մտավոր սեփականության և բարձրագույն կրթության ոլորտների փոխկապակցվածությունն ու ընդհանուր առանձնահատկությունները գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում:
- Նորովի լուսաբանվել են բարձրագույն կրթության ոլորտում մտավոր սեփականության պահպանման հիմնախնդիրներն ու մարտահրավերները:
- Հիմնավորվել է մտավոր սեփականության կրթության կարևորությունը և բուհերում դրա կազմակերպման անհրաժեշտությունը:
- Բացահայտվել են ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրները, և դիտարկվել են դրանց լուծման ռազմավարական ու մանկավարժագիտական ժամանակակից մոտեցումները:
- Մշակվել է ՀՀ բուհերում մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդել:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները

1. Գիտելիքահենք տնտեսությունը զարգանում է մտավոր սեփականության պահպանման ոլորտի համապատասխան գիտելիքներ և իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող հասարակության մտավոր ստեղծագործական գործունեության խթանման միջոցով:
2. Բուհերում մտավոր սեփականության պահպանմանն առնչվող հստակ մշակված քաղաքականությունների ու ռազմավարությունների բացակայությունը կամ դրանց մասնակի կիրառումը խոչընդոտում է մտավոր սեփականության կրթության արդյունավետ կազմակերպումը:
3. Մտավոր սեփականության կրթությունը հիմնականում իրականացվում է միայն որոշ ոլորտների (իրավաբանություն, տնտեսագիտություն) և համապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերի կամ դասընթացների շրջանակներում, իսկ այլ մասնագիտական ոլորտներում ներգրավված ուսումնառողների՝ մտավոր սեփականության պահպանման ոլորտի հիմնարար գիտելիքներին տիրապետելու հնարավորությունները սահմանափակ են:

4. Բուհերում մտավոր սեփականության պահպանման խնդրի նկատմամբ կրթության կառավարման և մանկավարժագիտական ժամանակակից մոտեցումների համալիր կիրառումն էապես խթանում է ուսումնառողների ստեղծագործական ու գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ կատարումը և նպաստում է բուհերում ակադեմիական ազնվության պահպանման մշակույթի ամրապնդմանը:
5. ՀՀ բուհերում մտավոր սեփականության կրթության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է այնպիսի մոդել, որը կհիմնվի միջազգային լավագույն փորձի վրա, կարտացոլի բարձրագույն կրթության ազգային համակարգի առանձնահատկությունները և կհամակցի ռազմավարական կառավարման և մանկավարժագիտական արդի մոտեցումները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Սույն հետազոտության շրջանակում մասնագիտական գրականության և գիտամեթոդական աղբյուրների ուսումնասիրության արդյունքներով հստակեցված են ազգային և միջազգային մակարդակներում մտավոր սեփականության պահպանման ոլորտի առանձնահատկություններն ու հիմնախնդիրները, համակարգված ու ամփոփված են գիտելիքահենք տնտեսության զարգացման, մտավոր սեփականության և բարձրագույն կրթության ոլորտներում առկա փոխկապակցված խնդիրները, վեր են հանված ՀՀ բուհերում մտավոր սեփականության կրթության կազմակերպման ընդհանուր նախադրյալները, տեսականորեն վերլուծության են ենթարկված ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրները, և բացահայտված ու հիմնավորված են այդ հիմնախնդիրների արդյունավետ լուծման ռազմավարական և մանկավարժագիտական արդի մոտեցումները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխման գործընթացներում և խթանել մտավոր սեփականության պահպանման մշակույթի ամրապնդումը կրթության տարբեր մակարդակներում և ուսումնառության տարբեր փուլերում: Հետազոտության գործնական նշանակությունը հատկապես արտացոլվում է ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված մոդելի և ուսումնական դասընթացի միջոցով: Մշակված մոդելն ու դասընթացը՝ որպես մտավոր սեփականության կրթության կազմակերպման կարևոր բաղադրիչներ, կարող են օգտակար լինել բարձրագույն կրթության ու մտավոր սեփականության ոլորտների հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների, կրթության քաղաքականություն

մշակողների, բուհերի վարչական կազմերի, կրթական ծրագրեր մշակողների, կրթության կառավարիչների, մանկավարժների, պրոֆեսորադասախոսական կազմի, վերապատրաստողների, ուսանողների, հետազոտողների և այլ շահագրգիռ կողմերի համար:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել կրթական ծրագրերի մշակման գործընթացներում, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներում, ուսումնամեթոդական ձեռնարկներում, դասագրքերում, գիտահետազոտական աշխատանքներում, բուհերի ռազմավարություններում, բարձրագույն կրթության բարեփոխման նախագծերում և ուսումնական ու գիտահետազոտական բնույթի այլ աշխատանքներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 175 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու դրանից բխող խնդիրները, ներկայացված են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական ու գիտական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Մտավոր սեփականության էությունն ու նշանակությունը գիտելիքահենք տնտեսության զարգացման գործընթացում»,** բաղկացած է երեք ենթագլուխներից, որտեղ ընդհանուր առմամբ քննարկվում են մտավոր սեփականության պահպանման ոլորտի էությունը, առանձնահատկությունները, դերն ու նշանակությունը գիտելիքահենք տնտեսության զարգացման գործընթացում:

Առաջին ենթագլխում՝ «Մտավոր սեփականության պատմական զարգացումը, տեսակները և առանձնահատկությունները», քննարկվում են մտավոր սեփականության էությունը, պատմական զարգացումը, պահպանման բնագավառներն ու դրանց առանձնահատկությունները: Առավել մանրամասն ներկայացվում են մտավոր սեփականության պահպանման ոլորտ համարվող հեղինակային իրավունքը, դրա առանձնահատկությունները, հեղինակների և հանրության կամ այլ շահագրգիռ կողմերի իրավահարաբերությունների կարգավորման տեսանկյունից հեղինակային իրավունքի պահպանման դերն ու կարևորությունը՝ շեշտադրելով հեղինակային իրավունքի պահպանման սերտ առնչությունը բարձրագույն կրթության ոլորտի և գիտելիքահենք տնտեսության զարգացման հետ:

Երկրորդ ենթագլուխը՝ «Մտավոր սեփականության պահպանման ոլորտի կարգավորման և բարեփոխման ազգային ու միջազգային փորձը», նվիրված է ազգային և միջազգային մակարդակներում մտավոր սեփականության պահպանման ու կարգավորման հիմնախնդիրներին և մտավոր սեփակա-նության ոլորտի բարեփոխման գործընթացներում առկա համընդհանուր խոչընդոտներին: Այս ենթագլխում քննարկվում են մտավոր սեփականության պահպանման ոլորտում առաջնային դերակատարություն ունեցող միջազգային կառույցների գործունեությունը, ոլորտային հիմնախնդիրների լուծումը խթանող միջազգային պայմանագրերն ու կոնվենցիաները, ինչպես նաև ՀՀ-ում մտավոր սեփականության ոլորտի կարգավորման ազգային փորձը:

«Մտավոր սեփականության ոլորտի հիմնախնդիրները ՀՀ գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացվում են ՀՀ-ում մտավոր սեփականության պահպանման և կարգավորման արդի հիմնախնդիրներն ու դրանց փոխկապակցվածությունը գիտելիքահենք տնտեսության զարգացման հետ, գիտելիքահենք տնտեսության էությունը, հասկացութային հենքն ու ժամանակակից ընկալումները, բուհերի գործունեության միջոցով մարդկային ներուժի զարգացման կարևորությունը և մասնագիտական բարձր որակներով ու փոխանցելի հմտություններ ունեցող աշխատուժի դերը գիտելիքահենք հասարակության զարգացման խնդրում:

Երկրորդ գլուխը՝ **«Մտավոր սեփականության կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում»**, բաղկացած է երեք ենթագլուխներից, որտեղ քննարկվում են ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում մտավոր սեփականության ոլորտի վերաբերյալ կրթության կազմակերպման հիմնախնդիրները, բարձրագույն կրթության և մտավոր սեփականության ոլորտները փոխկապակցող ու գիտելիքահենք տնտեսության կայուն զարգացումը խթանող առանցքային դերակատարների՝ բուհերի դերն ու նշանակությունը, ինչպես բուհերի գործունեության շրջանակներում կազմակերպվող մտավոր սեփականության կրթության միջոցով բարձրագույն կրթության ոլորտի բարելավման հնարավորությունները:

Առաջին ենթագլխում՝ «ՀՀ բուհերի դերը մտավոր սեփականության ոլորտի բարեփոխման գործընթացներում», հիմնավորվում է ՀՀ բուհերի դերակատարությունն ինչպես ՀՀ բարձրագույն կրթության, այնպես էլ մտավոր սեփականության ոլորտի բարեփոխման գործընթացներում: Միջազգային փորձի ուսումնասիրությամբ հիմնավորվել է նաև բուհերի գիտահետազոտական գործունեության միջոցով մտավոր ու ստեղծագործական աշխատանքների ստեղծման, տարածման ու կիրառման կարևորությունը՝ ի շահ բարձրագույն կրթության ու մտավոր սեփականության ոլորտների և գիտելիքահենք տնտեսության զարգացմանը: Այդ ենթագլխում ներկայացվում են նաև մտավոր սեփականության կրթության էությունը, հիմնական բնագավառները և մտավոր սեփականության պահպանման արդի հիմնախնդիրների արտացոլումը բուհերի գործունեության շրջանակում:

«ՀՀ բուհերում հեղինակային իրավունքի պահպանման օրենսդրական հիմքերը» խորագիրը կրող երկրորդ ենթագլխում քննարկվում են մտավոր սեփականության բնագավառ համարվող հեղինակային իրավունքի պահպանման այն առանցքային օրենսդրական հիմքերը, որոնք ուղղակի և սերտ

առնչություն ունեն բուհերի գործունեության հետ: Մանրամասն քննարկվում են հեղինակային իրավունքին առնչվող գործող օրենսդրական դրույթները, նախատեսված օրենսդրական փոփոխություններն ու բարեփոխումները, որոնք մտավոր սեփականության պահպանման կարևոր հիմքերից են և կարող են զգալիորեն ընդլայնել ՀՀ բուհերում մտավոր սեփականության կրթության արդյունավետ կազմակերպման հնարավորությունները:

Երրորդ ենթագլխում՝ «Մտավոր սեփականության կրթության կազմակերպման և իրականացման նախադրյալները ՀՀ բուհական համակարգում», քննարկվում են երկու բուհերի (ՀՀ և արտասահմանյան բուհեր) գործունեության համեմատական վերլուծության արդյունքները, որոնց միջոցով բացահայտվել են մտավոր սեփականության, մասնավորապես՝ հեղինակային իրավունքի պահպանման առկա ակադեմիական հիմնախնդիրները, ուսումնասիրության ենթարկված բուհերում այդ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ կիրառվող ինստիտուցիոնալ մոտեցումները, մտավոր սեփականության ոլորտի վերաբերյալ կրթության կազմակերպման և իրականացման բաղադրիչները և բարելավման ուղիները:

Երրորդ գլուխը՝ **«Մտավոր սեփականության կրթության կազմակերպման ռազմավարական և մանկավարժագիտական մոտեցումները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում»**, բաղկացած է չորս ենթագլուխներից: Այս գլխում ներկայացվում են ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում մտավոր սեփականության կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ռազմավարական արդի մոտեցումները (բուհերում քաղաքականությունների, ռազմավարությունների ու դրանցից բխող ներքին կանոնակարգերի մշակում, գործադրում, վերահսկում, արդյունավետության գնահատում և շարունակական բարելավում), ինչպես նաև բուհերում կիրառվող մանկավարժագիտական ժամանակակից մոտեցումները (ակադեմիական ազնվության պահպանման մշակույթի ամրապնդում, գրագողության կանխարգելման ֆորմալ և ոչ ֆորմալ մեխանիզմների կիրառում, ուսումնառության բոլոր փուլերում ուսումնառողների ակադեմիական օրինակելի վարքի ամրապնդում, նրանց ստեղծագործական աշխատանքի և գիտահետազոտական հմտությունների զարգացման շեշտադրում, իրավագիտակցության բարձրացում և այլն):

Առաջին ենթագլխում՝ «Մտավոր սեփականության պահպանման ռազմավարական մոտեցումները ՀՀ բուհերում», մանրամասն ներկայացվում են բուհերում մտավոր սեփականության պահպանման և առնչվող խնդիրների

կարգավորման ուղղությամբ կիրառվող քաղաքականությունները, միջազգային և ազգային (ՀՀ) մակարդակներում մտավոր սեփականության պահպանման խնդրի նկատմամբ ռազմավարական դիրքորոշումները, որոնք ըստ էության որոշիչ դեր ունեն մտավոր սեփականության կրթության արդյունավետ կազմակերպման համար: Այս ենթագլխում ներկայացվում են 11 ՀՀ պետական և ոչ պետական բուհերի գործունեության ուսումնասիրության արդյունքները, որոնք ցույց են տվել, թե ՀՀ բուհերի գործունեության շրջանակներում մտավոր սեփականության և հատկապես հեղինակային իրավունքի պահպանման հիմնախնդիրները որքանով և ինչպես են արտացոլված բուհերում, ՀՀ բուհերը որքանով են դրանց լուծումն առաջնահերթ համարում և ինչ ռազմավարական քայլեր են կատարում այդ խնդիրների արդյունավետ լուծման ուղղությամբ: Նշված հիմնահարցերի մանրամասն ուսումնասիրությունը թույլ է տվել հիմնավորել մտավոր սեփականության կրթության կարևորությունը և՛ բուհերի գործունեության բարեփոխման ու բարձրագույն կրթության որակի բարելավման, և՛ գիտելիքահենք հասարակության զարգացման տեսանկյուններից:

Երկրորդ ենթագլխում՝ «Ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրներն ու դրանց լուծման մանկավարժագիտական մոտեցումները ՀՀ բուհերում», քննարկվում է ակադեմիական ազնվության հասկացութային շրջանակն ու դրա էությունը, ակադեմիական անազնվության դրդապատճառներն ու դրսևորումները, որոնք պայմանավորված են նաև ազգային մշակութային առանձնահատկություններով և բնորոշ են ակադեմիական միջավայրին, ինչպես նաև ակադեմիական ազնվության պահպանման խնդրի նկատմամբ ՀՀ բուհերում կիրառվող մանկավարժագիտական մոտեցումները: Ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրներն այս ենթագլխում քննարկվում են նաև բարձրագույն կրթության որակի ապահովման և մասնագիտական պատրաստվածության նկատմամբ բուհերի շահակիցների դիրքորոշման և վարքի տեսանկյուններից: Բացի այդ, շեշտադրվում են դասավանդող-ուսումնառող ներգործության և համագործակցության կառուցողական բնույթի կարևորությունն ակադեմիական ազնվության ապահովման խնդրում՝ հաշվի առնելով այն, որ ակադեմիական բարենպաստ միջավայրի ստեղծումն ու ակադեմիական ազնվության պահպանումը խրախուսող դասավանդողների դերը որոշիչ է:

Երրորդ ենթագլուխը՝ «ՀՀ բուհերում գրագողության դրսևորումները և դրա կանխարգելման մանկավարժական ուղիները», նվիրված է հեղինակային իրավունքի խախտման ամենատարածված ակադեմիական դրսևորման՝

գրագողության հիմնախնդրի ուսումնասիրությանը: Կրթության կառավարման և մանկավարժագիտական ժամանակակից մոտեցումների տեսանկյուններից մանրամասն ներկայացվում են *գրագողություն* հասկացության էությունը, հիմնական տեսակները, դրա բացասական ազդեցությունը կրթության որակի, ուսումնառողների անձնական և մասնագիտական որակների զարգացման, բուհերի արժեհամակարգերի ու ակադեմիական մշակույթի ամրապնդման և լայն առումով՝ գիտելիքահենք հասարակության կայուն զարգացման վրա: Այս ենթագլխում վերլուծության են ենթարկվում նաև ՀՀ բուհական համակարգում վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունների արդյունքները, որոնց միջոցով բացահայտվում են ՀՀ բարձրագույն կրթության համակարգում ներգրավված հիմնական դերակատարների իրազեկվածության աստիճանը, բուհերում գրագողության արմատացման հիմնական պատճառներն ու բացասական հետևանքները: Սույն հետազոտության շրջանակում միջազգային և ազգային կրթական փորձի ուսումնասիրության արդյունքների հիման վրա ներկայացվում են գրագողության բացահայտման և կանխարգելման մանկավարժական ուղիներն ու միջոցառումները, որտեղ շեշտադրվում է ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրների լուծման հետևողական և համալիր մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը:

Չորրորդ ենթագլուխը՝ «Մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդելը ՀՀ բուհերի համար», ներկայացնում է հետազոտության շրջանակում ուսումնասիրված մասնագիտական գրականության և գիտա-մեթոդական աղբյուրների վերլուծության արդյունքների վրա մշակված մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդելը: Մշակված մոդելի բովանդակային հենքը կառուցված է սույն հետազոտության շրջանակում բացահայտված ոլորտային արդի հիմնախնդիրների ու մարտահրավերների ուսումնասիրության արդյունքների վրա: Մշակված բազմամակարդակ մոդելում ամփոփված են մտավոր սեփականության ոլորտի վերաբերյալ կրթության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ հիմնական բաղադրիչները: Մոդելը հիմք է հանդիսացել նաև սույն հետազոտության շրջանակում «Մտավոր սեփականության պահպանման հիմնախնդիրները բարձրագույն կրթության ոլորտում» թեմայով ուսումնական դասընթացի մշակման համար: Այդ դասընթացը՝ որպես մոդելի ինստիտուցիոնալ մակարդակի առանցքային բաղադրիչ, կարող է ՀՀ բուհերում ներդրվել որպես պարտադիր կամ կամընտրական առարկա և իրականացվել ուսուցման տարբեր ձևերով:

Հաշվի առնելով այն, որ մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդելը մշակվել է մտավոր սեփականության պահպանման և բարձրագույն կրթության ոլորտների հիմնախնդիրների, ազգային ու միջազգային փորձի և մասնագիտական գրականության համապարփակ ուսումնասիրության, ներառյալ մտավոր սեփականության ոլորտը կարգավորող ազգային օրենսդրական դաշտի (հեղինակային իրավունքի բնագավառ) առանցքային դրույթների քննարկման ու համեմատական վերլուծության, ՀՀ բուհերում մտավոր սեփականության կրթության կազմակերպման նախադրյալների բացահայտման, արդի հիմնախնդիրների ու մարտահրավերների և դրանց հաղթահարմանն ուղղված՝ ՀՀ բուհերի ռազմավարական ու մանկավարժագիտական ժամանակակից մոտեցումների համակցված ուսումնասիրման, ինչպես նաև մտավոր սեփականության և բարձրագույն կրթության ոլորտների առաջատար մասնագետների կողմից տրամադրված մասնագիտական խորհրդատվությունների վրա, մշակված մոդելը կարող է կառուցակարգ հանդիսանալ լայն առումով բարձրագույն կրթության և մտավոր սեփականության ոլորտի մասնագետների, և նեղ առումով՝ կրթության քաղաքականություն մշակողների, բուհերի վարչական ու պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչների, կրթության կառավարիչների, մասնագիտության կրթական ծրագրեր և ուսումնական պլաններ մշակողների, կրթության բովանդակության և կրթական ծրագրերի պատասխանատուների, մանկավարժների, ուսումնառողների և ակադեմիական հանրության այլ մասնակիցների համար:

Սույն հետազոտության շրջանակում մշակված մոդելում ցույց է տրվում, որ մտավոր սեփականաության կրթության կազմակերպումը սերտորեն փոխկապակցված գործընթացների ու բաղադրիչների համալիր է, որի յուրաքանչյուր մակարդակում առկա բաղադրիչների ապահովումը պայմանավորում է մնացած մակարդակների բաղադրիչների արդյունավետ գործադրումը: Մտավոր սեփականության կրթությունը պետք է ներառի պետական և ինստիտուցիոնալ մակարդակներում իրականացվող այնպիսի գործընթացներ, որոնց ներդաշնակեցումն ու համաչափ բարեփոխումները նպատակաուղղված կլինեն գիտելիքահենք հասարակության զարգացմանն ու մտավոր սեփականության պահպանման մշակույթի ամրապնդմանը:

Մտավոր սեփականության կրթության կազմակերպման ներբուհական գործընթացներն ու միջոցառումները (այսինքն՝ մշակված մոդելում ներկայացված ինստիտուցիոնալ մակարդակի բաղադրիչները) ռազմավարական

պլանավորման տեսանկյունից պետք է աստիճանակարգային ու տրամաբանական փոխկապակցվածություն ունենան և միտված լինեն ազգային մակարդակում առկա հիմնախնդիրների լուծմանը: Այս համատեքստում ցանկալի է, որ ՀՀ բուհերը նախևառաջ վերանայեն իրենց քաղաքականությունները, դրանցից բխող ռազմավարությունները, մարտավարություններն ու ընթացակարգերը, որոնք կարող են հիմք հանդիսանալ ներբուհական միջավայրում մտավոր սեփականության պահպանման խնդրի լուծման և մտավոր սեփականության կրթության կազմակերպմանն ուղղված գործընթացների կազմակերպման ու իրականացման համար: Բուհերի կառավարման մակարդակում նշված խնդիրների ֆորմալացումը միաժամանակ և՛ հիմք կհանդիսանա բուհերի բոլոր ստորաբաժանումների կողմից ապագայում մշակվելիք ներքին մարտավարությունների համար, և՛ կապահովի խնդիրների լուծման համակարգային մոտեցումների կիրառումը: Մտավոր սեփականության պահպանմանն առնչվող ռազմավարությունների, կանոնակարգերի և այլ փաստաթղթերի մշակման նախնական փուլում կարևոր է ապահովել ոչ միայն վարչական կազմի, այլ նաև մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդելի ինստիտուցիոնալ մակարդակում նախանշված առանցքային ներքին շահակիցների մասնակցությունը՝ կառավարչական, վարչական, ուսումնադաստիարակչական ու գիտահետազոտական ներբուհական խնդիրների լուծումներն առավել նպատակային և իրատեսական դարձնելու համար:

Հետազոտության արդյունքների հիման վրա ՀՀ բուհերի համար մշակված մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդելը ներկայացվում է ստորև (Գծապատկեր 1):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՈԴԵԼ ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

գիտելիքահենք հասարակության և գիտելիքահենք տնտեսության զարգացում

ԲՈՒՀԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿ

- բուհի առաքելություն, տեսլական, արժեքներ և նորմեր
- ռազմավարական նպատակներ, խնդիրներ, առաջնահերթություններ
- մտավոր սեփականության կրթության կազմակերպման քաղաքականություն և ռազմավարություն
- մտավոր սեփականության կրթության կազմակերպման հայեցակարգեր, ընթացակարգեր, կանոնակարգեր

ԲՈՒՀԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿ

ամբիոններ, գիտաուսումնական կենտրոններ, ուսխորհուրդ, ուսանողական գիտական ընկերություններ, գրադարան, որակի ապահովման և ռազմավարությունների մշակման պատասխանատու կառույցներ, գիտահետազոտական կենտրոններ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ՄՍ) ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Բուհի առանցքային շահակիցների՝

- ընկալումները, վերաբերմունքը ՄՍ պահպանության խնդրի վերաբերյալ և դրան տրվող կարևորությունը
- ՄՍ պահպանման հանձնառությունը և պատասխանա-տվությունը
- ՄՍ պաշտպանության վերաբերյալ իրազեկվածու-թյունը
- ակադեմիական կայուն օրինակելի վարքը (ակադեմիական ազնվության սկզբունքի պահպանում)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտամանկավարժական ու մասնագիտական գրականության վերլուծության, տեսական ու հետազոտական աշխատանքների, ինչպես նաև ազգային ու միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացություններին:

1. Գիտելիքահենք տնտեսության զարգացման հիմքում մտավոր սեփականության կրթությունն է, որի միջոցով ձևավորվում և զարգանում է գիտելիքահենք հասարակությունը: Մտավոր սեփականության պահպանման արդի խնդիրների լուծումն ու մարտահրավերների հաղթահարումը հնարավոր է միայն կրթված, իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող և համապարփակ գիտելիքներ ունեցող գիտելիքահենք հասարակության ակտիվ գործունեության միջոցով:
2. Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ բուհերում մտավոր սեփականության, ներառյալ ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող առանցքային խնդիրները լուծելի են ազգային օրենսդրական մեխանիզմների, ինստիտուցիոնալ (բուհերի) մակարդակում հստակ քաղաքականությունների ու ռազմավարությունների և ժամանակակից մանկավարժագիտական մոտեցումների համալիր կիրառման պայմաններում: Սա գլխավորապես պայմանավորված է նրանով, որ մտավոր սեփականության կրթության կազմակերպումը բազմաբաղադրիչ գործընթաց է և պահանջում է ազգային ու ինստիտուցիոնալ քաղաքականությունների, ֆորմալ և ոչ ֆորմալ մեխանիզմների, ավանդական և ժամանակակից մանկավարժագիտական մոտեցումների արդյունավետ համակցում ու կիրառում:
3. Մասնագիտական գրականության, գիտական աղբյուրների, ինչպես նաև բուհերի գործունեության առանցքային բաղադրիչների համակողմանի ուսումնասիրման արդյունքները փաստում են, որ ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ մակարդակներում հիմնականում բացակայում են մտավոր սեփականության պահպանման վերաբերյալ հստակ մշակված քաղաքականություններն ու ռազմավարությունները, կամ առանձին դեպքերում առկա են որոշ ներքին կանոնակարգեր, որոնց մասնակի կամ ոչ հետևողական գործարկումը խոչընդոտում է բուհերում մտավոր սեփականության պահպանմանն առնչվող հիմնախնդիրների համակարգային, լիարժեք և երկարաժամկետ լուծումը:

4. Թեև ՀՀ բուհերում առկա են մտավոր սեփականության կրթության համար անհրաժեշտ նախադրյալները, սակայն մտավոր սեփականության կրթությունը հիմնականում սահմանափակվում է որոշ ոլորտների (իրավաբանություն, տնտեսագիտություն) և համապատասխանաբար այդ ոլորտներում մասնագետներ պատրաստելուն ուղղված կրթական ծրագրերի կամ դասընթացների իրականացմամբ, որը բավարար չափով չի լուծում ազգային մակարդակում գիտելիքահենք հասարակության զարգացման խնդիրը:
5. ՀՀ բուհերում հեղինակային իրավունքի խախտման, ներառյալ ակադեմիական անազնվության լայնատարած դրսևորումները գլխավորապես պայմանավորված են ՀՀ բուհերում մտավոր սեփականության պահպանմանն առնչվող քաղաքականությունների ու ռազմավարությունների բացակայությամբ կամ դրանց մասնակի և ոչ հետևողական կիրառմամբ, ինչպես նաև ակադեմիական հանրության շրջանում մտավոր սեփականության պահպանման ոլորտի գիտելիքների, իրազեկվածության ու իրավագիտակցության ցածր մակարդակով:
6. Ակադեմիական ազնվության խախտման (մասնավորապես գրագողության) հիմնախնդրի՝ որպես բուհերում հեղինակային իրավունքի խախտման ամենալայն տարածում ունեցող դրսևորման կանխարգելումը պահանջում է այնպիսի մանկավարժագիտական արդի մոտեցումների կիրառում, որոնք նախևառաջ նպատակուղղված կլինեն ուսումնառող-դասավանդող փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը, ուսումնառողների ակադեմիական օրինակելի վարքի ձևավորմանն ու ամրապնդմանը, ուսումնառողների վերլուծական-քննադատական մտքի զարգացմանն ու խրախուսմանը:
7. Համապարփակ ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների հիման վրա մշակված մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդելը ներառում է ազգային ու ինստիտուցիոնալ մակարդակներում անհրաժեշտ առանցքային բաղադրիչները և արտացոլում է վերջիններիս փոխկապակցվածությունը մտավոր սեփականության պահպանման մշակույթի ձևավորման ու ամրապնդման տեսանկյունից: Մոդելի հիման վրա մշակված՝ մտավոր սեփականության թեմայով ուսումնական դասընթացն ամփոփում է հետազոտական աշխատանքի հիմնական արդյունքները և բովանդակային ու կառուցվածքային առումներով համապատասխանեցված է ՀՀ բուհերում կրթության կազմակերպման ձևերին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատություններում՝

1. Խաչատրյան Ռ., Շահինյան Ա., *Մտավոր սեփականության իրավունքի իրավակիրառման և պահպանման հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների համատեքստում,* Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(29), Երևան, Լինգվա, 2013, 100-117 էջեր:
2. Շահինյան Ա., *Մտավոր սեփականության ոլորտի հիմնախնդիրները ՀՀ գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում,* Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(37), Երևան, Լինգվա, 2016, 176-186 էջեր:
3. Շահինյան Ա., *ՀՀ բուհերի դերը մտավոր սեփականության ոլորտի բարեփոխման գործընթացներում,* Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(37), Երևան, Լինգվա, 2016, 187-200 էջեր:
4. Շահինյան Ա., *Մտավոր սեփականության կրթության կազմակերպման նախադրյալները և ռազմավարական մոտեցումները ՀՀ բուհերում,* Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(41), Երևան, Լինգվա, 2017, 114-136 էջեր:
5. Շահինյան Ա., *Հայաստանի և Ղրղզստանի բարձրագույն կրթության համակարգերում մտավոր սեփականության կրթության կազմակերպման և իրականացման նախադրյալները,* Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(39), Երևան, Լինգվա, 2017, 533-549 էջեր:
6. Շահինյան Ա., *ՀՀ բուհերում գրագողության դրսևորումները և նրա կանխարգելման մանկավարժական ուղիները,* Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(41), Երևան, Լինգվա, 2017, 246-262 էջեր:

ШАГИНЯН АНИ ГРАЧЯЕВНА

ОРГАНИЗАЦИЯ ОБРАЗОВАНИЯ ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ ОСНОВАННОЙ НА ЗНАНИЯХ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 06.07.2018г. в $14^{\underline{00}}$ на заседании специализированного совета 065 ВАК по педагогике, действующего при ЕГУ. Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна $52^{а}$, корпус факультета армянской филологии ЕГУ, N 203 аудитория.

РЕЗЮМЕ

Актуальность темы. В контексте развития экономики, основанной на знаниях, выявление, эффективное использование и оценивание интеллектуального потенциала являются важнейшими факторами для сбалансированного развития рынка труда и образования. Однако поощрение интеллектуальной деятельности в нынешных условиях непропорционального развития науки, образования и экономики, создание интеллектуальной собственности (ИС) и развитие экономики, основанной на знаниях, требуют более эффективных механизмов для создания и передачи знаний в области ИС, а также новых подходов к решению существующих проблем как на национальном, так и на институциональном (академическом) уровнях.

Так как вузы играют ключевую роль в создании среды для выявления, получения, использования и распространения интеллектуальных продуктов, в данном исследовании детально расскрываются проблемы и предпосылки для организации образования ИС в вузах Республики Армения (РА) и соответствующие стратегические и педагогические подходы.

Цель исследования. Целью исследования является выявление и обоснование ключевой роли образования о сфере интеллектуальной собственности в контексте реформы высшего образования и процессах экономического развития, основанных на знаниях.

Научная новизна исследования. В результате всестороннего изучения были по-новому разъяснены и освещены основные проблемы и перспективы защиты ИС в области высшего образования, выявлены взаимосвязь и общие черты сфер ИС и высшего образования в контексте развития общества, основанные на знаниях; была обоснована важность образования в области ИС и необходимость его организации в вузах, а также была разработана модель организации образования в области ИС в вузах РА.

Основные положения, вынесенные на защиту.

1. Экономика, основанная на знаниях, развивается с помощью поощрения интеллектуальной творческой деятельности общества с соответствующими знаниями в области ИС и с высоким уровнем правосознания.
2. Отсутствие или фрагментарное использование политики и стратегий в области защиты ИС в вузах препятствует эффективной организации образования в области ИС.
3. Обучение ИС в основном проводится только в определенных областях (правоведение, экономика) и в соответствующих учебных программах или курсах, а ученики, которые вовлечены в другие профессиональные сферы, имеют ограниченные возможности овладения базовыми знаниями в области защиты ИС.
4. Комплексное применение современных управленческих и педагогических подходов к проблеме ИС в вузах существенно способствует эффективному осуществлению творческой и научно-исследовательской деятельности студентов и укреплению культуры сохранения академической честности в вузах.
5. Для эффективной организации обучения ИС в вузах РА необходимо разработать и применять модель, которая будет отражать особенности национальной системы высшего образования, будет основана на передовой международной практике и обоснует применение современных управленческих и педагогических подходов.

Теоретическоая значимость исследования. В результате комплексного исследования координированы и обобщены взаимосвязанные проблемы обучения ИС и развитие экономики, основанной на знаниях, теоретически проанализированы общие предпосылки и основные проблемы организация ИС в вузах РА, и обоснованы стратегические и педагогические современные подходы к эффективному решению выявленных проблем.

Практическая значимость исследования. Результаты исследования могут быть включены в процессы реформ высшего образования и способствовать укреплению культуры защиты ИС на разных уровнях образования и на разных этапах обучения. Практическое значение данного исследования особенно отражено в модели и учебной программе, разработанной на основе результатов исследований. Результаты исследования могут быть использованы при разработке образовательных программ, учебных и квалификационных трейнингов, учебных методических пособий, учебников, исследовательских работ, университетских стратегий и других образовательных и исследовательских работ.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложений. Она составляет 175 страниц.

ANI HRACHYA SHAHINYAN

THE ORGANIZATION OF INTELLECTUAL PROPERTY EDUCATION IN THE CONTEXT OF DEVELOPMENT OF KNOWLEDGE-BASED ECONOMY

Dissertation for the Scientific Degree of Candidate of Pedagogical Sciences (PhD) on the speciality 13.00.01 - "Theory and History of Pedagogy".

The defense of the dissertation will take place at $14^{\underline{00}}$ on the 6th of July, 2018 at the session of the Special Board 065 on "Pedagogy" SCC (Supreme Certifying Commission) to award scientific degrees at Yerevan State University.

Address: 0025, 52a Abovyan str., Yerevan, Yerevan State University, Faculty of Armenian Philology, Room N 203.

SUMMARY

The actuality of the research. In the context of development of knowledge-based economy, the identification, efficient application and evaluation of intellectual are crucial for the assurance of balanced development of labour market and education. However, under current conditions of disproportional development of education, science and economy, the promotion of intellectual activity and the creation of intellectual outputs necessitate more efficient institutional mechanisms and pedagogical approaches to the solution of current problems. These mechanisms and approaches should be aimed at creation and transfer of valuable knowledge in the sphere of intellectual property (IP).

In this context, the higher education institutions (HEIs) play a key role in creating favourable environment for identification, use and transfer of intellectual outputs. Hence, the current research touches upon the issues and prerequisites for the organization of IP education at HEIs, including those of the Republic of Armenia (RA), as well as respective strategic and pedagogical approaches which significantly foster the development of knowledge-based society.

The aim of the research is to identify and substantiate the key role of IP education in the context of higher education reforms and development of knowledge-based economy.

The scientific novelty of the research. Based on the results of the current research, the key problems and challenges of IP protection in the sphere of higher education have been illustrated from new perspectives; the interlink between and common peculiarities of the spheres of IP and higher education in the context of development of knowledge-based society have been identified and thoroughly elaborated; the crucial importance of IP education and the necessity of organization of IP education at HEIs have been substantiated, as well as the model of organization of IP education for RA HEIs has been developed.

The basic provisions for defense:

1. The development of knowledge-based economy is achievable due to the enhancement and promotion of intellectual and creative activity of the society which has relevant knowledge in IP protection sphere and high level of legal mindset.
2. The absence of clearly set IP policies and strategies of HEIs or their partial application at HEIs hinders the efficient organization of IP education.
3. The implementation of IP education through conduction of respective academic programs or courses is mainly endorsed only in some of the professional spheres (law, economy), and the learners who are involved in other professional fields have limited opportunities to attain basic knowledge in IP sphere.
4. The complex application of modern pedagogical and education management approaches to the solution of the IP related problems existent at HEIs significantly fosters the efficient fulfillment of learners' creative and scientific-research activities as well as enhances the culture of academic honesty at HEIs.
5. In order to ensure efficient organization of IP education at the RA HEIs, it is necessary to develop a model which will be based on best international practice on the one hand, and will reflect the peculiarities of national higher education system and will combine the modern strategic management and pedagogical approaches, on the other hand.

The theoretical significance of the research. Based on the research outputs, the interlinked problems of IP education and knowledge-based economy have been coordinated and summed up, the common prerequisites and key issues regarding the organization of IP education at the RA HEIs have been theoretically analyzed, as well as strategic and pedagogical approaches to the efficient solution of the raised problems have been reasoned.

The practical significance of the research. The research outputs can be applied in the reformative processes of higher education and can reinforce the culture of IP protection at different levels and stages of education. The practical importance of the current research is especially reflected in the model and respective academic course, which have been developed and elaborated based on the results of the research. In general, the research outputs can bring added value to the processes of development of academic programs, courses and professional trainings, educational-methodical manuals, textbooks, research works, institutional strategies and in other educational and research activities.

The structure and volume of the dissertation. The dissertation paper comprises an introduction, three chapters, conclusions, list of references and appendices. The volume of the dissertation paper is 175 pages.